2025, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (680)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Գերագույն հոգևոր խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ

Հունիսի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի Ժողով:

Գերագույն հոգևոր խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ:

Հայտարարություն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խոր մտահոգություն է արտահայտում Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի և իր համախոհների նկատմամբ այսօր իրավապահ մարմինների ձեռնարկած գործողությունների և նրանց մեղսագրվող ծանր մեղադրանքների կապակցությամբ:

Իրավական գործընթացի նկատմամբ վստահություն չի ներշնչում այն հանգամանքը, որ սկզբից ևեթ ՀՀ վարչապետը և իշխող կուսակցության տարբեր ներկայացուցիչներ ակնհայտ քաղաքական նկատառումներով տարաբնույթ հրապարակումների միջոցով փորձում են ուղղորդել իրավապահ մարմիններին:

Դատապարտելի է նաև հիշյալ գործընթացը Եկեղեցու հետ արհեստականորեն կապակցելու և Մայր Աթոռի անունը շահարկելու դիտավորությունը, ինչն ամբողջապես տեղավորվում է իշխանությունների նախաձեռնած հակաեկեղեցական արշավի համատեքստում:

Մայր Աթոռը օրինական բոլոր միջոցներով հետամուտ է լինելու գործի արդարացի ընթացքին և հորդորում է պատկան մարմիններին չտրվել քաղաքական շահարկումներին, առաջնորդվել ՀՀ Սահմանադրության և օրենքների պահանջներով՝ հարգելով անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Խստորեն դատապարտում ենք ակնհայտ քաղաքական շարժառիթներով պայմանավորված հետապնդումը

Քիչ առաջ հայտնի դարձավ, որ Հայոց Եկեղեցուն աջակցություն հայտնելուց անմիջապես հետո իրավապահ մարմինների կողմից փորձ է կատարվել ձերբակալելու ազգային բարերար Սամվել Կարապետյանին, և այս պահին խուզարկվում է նրա տունը:

Խստորեն դատապարտում ենք ակնհայտ քաղաքական շարժառիթներով պայմանավորված հետապնդումը: Հորդորում ենք ՀՀ իշխանություններին անհապաղ դադարեցնել ապօրինի գործողությունները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 17.06.2025 թ.

Մայր Աթոռը հորդորում է ժողովրդին չտրվել սադրանքների, պահպանել զգոնությունը և շարունակել իրենց սատարումը օրինական բոլոր միջոցներով

Հունիսի 27-ի առավոտյան ՀՀ ԱԱԾ և Ոստիկանության ուժերը, մուտք գործելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վեհարանի տարածք, փորձել են ձերբակալել Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին, որը Մայր Աթոռ էր ժամանել քահանայից տարեկան ժողովի առիթով՝ իբրև հավաքի համակարգող:

Չնայած այն հանգամանքին, որ Միքայել Սրբազանը պատրաստակամություն էր հայտնել իրավապահ մարմնի ներկայացուցիչների հետ մեկնել Քննչական կոմիտե, քաղաքացիները և ներկա հոգևորականները բողոքի ձայն բարձրացրին՝ տեսնելով դիմակավորված ԱԱԾ և Ոստիկանության ծառայողների մեծ հոսքը: Համայն հայության հոգևոր կենտրոնում իրավապահների կողմից դրսևորված պահվածքը, ուժի կիրառումը քաղաքացիների հանդեպ դատապարտելի են և անընդունելի:

Միքայել Սրբազանը, հակառակ նրան, որ պատշաճ կարգով չի ծանուցվել, կայացրել է որոշում և չխուսափելով ներկայացված պահանջից՝ կմեկնի Երևան՝ ներկայանալու Քննչական կոմիտե:

Մայր Աթոռը հորդորում է ժողովրդին չտրվել սադրանքների, պահպանել զգոնությունը և շարունակել իրենց սատարումը օրինական բոլոր միջոցներով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 27.06.2025 թ.

Խստորեն դատապարտում ենք նախաձեռնված հակաեկեղեցական գործողությունները և գնահատում որպես անարգանք

Այսն թվականի հունիսի 27-ը՝ Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ Հայաստանի իշխանությունների կողմից իրականացված խայտառակ գործողություններով, մեր ժողովրդի նորագույն պատմության մեջ կմնա որպես ազգային ամոթի օր:

Շինծու հիմքերով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրավապահ մարմինների ներկայացուցիչները մուտք են գործել Մայր Աթոռի տարածք՝ նպատակ ունենալով ձերբակալելու և բռնի ուժով բերման ենթարկելու Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին: Այդ ընթացքում մեծածավալ ուժերով արգելափակվել են Մայր Աթոռի մուտքերը և խափանվել համայն հայության հոգևոր կենտրոնի բնականոն կյանքը:

Արհեստական խոչընդոտներ են հարուցվել նաև դեպի Վաղարշապատ և Սուրբ Էջմիածին ուղևորվողների համար, ընդհուպ անցկացվել են ստուգումներ:

Խստորեն դատապարտում ենք նախաձեռնված հակաեկեղեցական գործողությունները և գնահատում որպես անարգանք հայոց հոգևոր կենտրոնի՝ Սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ, նաև հավատացյալների հոգևոր զգացումներին հասցված ծանր վիրավորանք:

Ինչպես երկրի վարչապետի, այնպես և իշխանության տարբեր ներկայացուցիչների հռետորաբանությունից ակնհայտ է, որ ծրագրված այս գործողությունն իշխող ուժի եկեղեցահալած քաղաքականության հերթական դրսևորումն է: Երբեք հնարավոր չէր պատկերացնել, որ հայրենի իշխանություններն ունակ են նման դավադիր հարված հասցնելու հայոց հնագույն ազգային հաստատությանը՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն. այդպես նույնիսկ չեն վարվել ժամանակի օտար տիրապետողները:

Կոչ ենք անում մեր ժողովրդի զավակներին՝ շարունակել նույն նախանձախնդրությամբ լինել Մայր Եկեղեցու կողքին և աղոթել Սուրբ Էջմիածնի պայծառության և մեր հայրենիքի խաղաղության համար: Հոգևորականները հավատավոր մեր զավակների հետ, ի զորակցություն Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի, լինելու են Քննչական կոմիտեի և դատարանի վայրերում:

Դատարանից ակնկալում ենք արդարացի որոշման կայացում:

Մայր Աթոռը օրինական բոլոր միջոցների կիրառմամբ պայքարելու է Եկեղեցու և եկեղեցականության իրավունքների պաշտպանության համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
27.06.2025 թ.

Միքայել արքեպիսկոպոսի դեմ ձեռնարկված քայլերը ոչ այլ ինչ են, քան դասական իմաստով քաղաքական հետապնդում և դրսևորում անձնական վրեժխնդրության

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խստորեն դատապարտում է հունիսի 28-ին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի առնչությամբ դատարանի կայացրած կալանավորման և ազատազրկման որոշումը, որն ուղղակի հետևանքն էր վարչապետի և իշխանության բարձրաստիճան մյուս պաշտոնյաների եկեղեցահալած քաղաքականության և եկեղեցականների դեմ թշնամանքի ու ատելության խոսքի:

Փաստերը վկայում են, որ քաղաքական որոշակի ուղղորդմամբ և ճնշման ներքո դատարանի կայացրած որոշումն անհիմն է և ապօրինի:

Միքայել արքեպիսկոպոսի դեմ ձեռնարկված քայլերը ոչ այլ ինչ են, քան դասական իմաստով քաղաքական հետապնդում և դրսևորում անձնական վրեժխնդրության՝ իրեն քրիստոնյա և Հայ Եկեղեցու զավակ նկատող մի անձի, որ նախօրեին իրավապահ մարմինների ուժերին հրահանգեց պաշարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ պախարակելի, աննախադեպ ոտնձգություն կատարելով համայն հայության հոգևոր կենտրոնի, եկեղեցականների և հավատավոր ժողովրդի նկատմամբ:

Հորդորում ենք դատական համակարգին և պատկան մարմիններին գործել օրինականության դաշտում և անհապաղ ազատ արձակել Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
28.06.2025 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնին

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն:

«Ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է»
(Ա Կորնթ. 3.11):



Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Հայրապետիս համար հոգևոր անհուն ուրախություն է Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնի հոգեւորոգ այս օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբված տեսնել ազգիս հազարավոր զավակների՝ հայրենի մեր երկրի տարբեր շրջաններից և սփյուռքի համայնքներից: Հայրական սիրով ողջունում ենք ձեզ և բերում Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները ամենքիդ:

Հավաքվել ենք Քրիստոսի էջքով նվիրագործված այս սրբավայրում՝ վերանորոգելու սիրո ու նվիրումի մեր ուխտը առ Աստված ու հայրենին և առ Սուրբ Էջմիածինը, որը Տիրոջ նախախնամությամբ դարձավ մեր ազգի հոգևոր զարթոնքի զորությունը, մեր ինքնության դարբնոցը և նոր շունչ ու ավյուն հաղորդեց մեր ժողովրդին, մեր բազմադարյա պատմության ընթացքին: Աստված մեզ ընդունեց իբրև ազգ սուրբ և ժողովուրդ սեփական (Ա Պետր. 2.9) և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի տեսիլքով ազգիս պարգևեց Սուրբ Էջմիածինը՝ որպես փրկության տապան և մեր հավատքի անսասան վեմ ու հիմնապյուն: «Ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է» (Ա Կորնթ. 3.11),– ասում է Պողոս առաքյալը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Աստծո հետ մեր ժողովրդի հավերժական ուխտի խորհրդանիշն է, որ դրոշմված է ամեն հայի հոգում: Սուրբ Էջմիածինը մեր հոգևոր էությունն ու ազգային դիմագիծն է, մեր սիրտն ու ոգին է, մեր անցյալն ու ներկան և մեր ապագան: Սուրբ Էջմիածնով է միշտ միասնական մնացել մեր ժողովուրդը: Չկա Սուրբ Էջմիածին առանց հայության, և չկա հայություն առանց Սուրբ Էջմիածնի: «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»,– ճշմարտապես արձանագրում է Առաքել Դավրիժեցի պատմիչը:

Սուրբ Էջմիածինը անշեջ ու լուսավոր փարոս է մեր ժողովրդի փրկության ճանապարհին: Կաթողիկոսանիստ Սուրբ Էջմիածնից դարեր շարունակ Հայրապետական առաջնորդություն և օրհնություն են բաշխվում համայն հայությանը: Քրիստոսաէջ այս վայրում դարեր առաջ Հայրապետական Աթոռի վերահաստատումով ազգս հայոց համախմբվեց Հայաստանում և վերականգնեց իր անկախ պետականությունը: Եղել են ժամանակներ, երբ տարբեր ուժեր ձգտել են սահմանափակել մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունը և ենթարկեցնել իրենց շահերին: Այդ ճանապարհը, ցավալիորեն, կործանարար բաժանումներ է բերել ներազգային կյանքում: Բայց հավատավոր մեր ժողովուրդը, ունկնդիր Տիրոջ խոսքին, թե՝ «ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է» (Մատթ. 12.25), միշտ նախանձախնդիր է եղել պահպանելու իր միասնականությունը և ի սեր հայրենյաց համախմբվածությունը:

Այսօր էլ նման տագնապալի օրեր ենք ապրում: Մեր երկրի բազմաթիվ հիմնախնդիրների առջև միավորման ջանքերի փոխարեն շարունակվում են հասարակությանը պառակտելու ցավալի գործողությունները: Իշխանությունների կողմից սանձազերծված հակաեկեղեցական արշավը լրջագույն սպառնալիք է ազգային մեր միաբանությանը, մեր երկրի ներքին կայունությանը և ուղիղ հարված՝ հայոց պետականությանը: Օրեր առաջ ականատես դարձանք մի նոր դատապարտելի երևույթի. ի պաշտպանություն Սուրբ Էջմիածնի հանդես եկող եկեղեցականներ հայորդու՝ ազգային բարերար Սամվել Կարապետյանի դեմ իրականացվեց անօրինական հետապնդում: Արդարև, ատելությամբ ու թշնամանքով բարիք չի ծնվի, բռնաճնշումներով երկիր չի կառուցվի, սպառնալիքի ու վախի մթնոլորտում արդարություն ու համերաշխություն չեն հաստատվի: Սուրբ Էջմիածինը՝ հավատարիմ հոգեփրկչական և ազգի ու պետականության զորացման իր պատմական առաքելությանը, հետևողականորեն շարունակելու է պաշտպանել ազգային շահերն ու իրավունքները, անխաթար պահել մեր ժողովրդի միաբանությունը և համախմբել համայն հայությանը՝ արիությամբ դիմագրավելու ազգային ու հայրենական կյանքի առջև ծառացած դժվարություններն ու մարտահրավերները:

Սիրելինե՛ր, որդիական հավատարմության զգացումներով այսօր դուք՝ որպես ուխտավոր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եք՝ օրհնություն ստանալու տոնի առիթով դուրս բերված Տերունական Սուրբ Խաչի Մասունքից, Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջից, Սուրբ Գեղարդից և երկրպագության համար ձեզ մատուցված սրբություններից: Այս սրբությունների հրաշագործ զորությամբ մեր բարդ ու վտանգաշատ ժամանակներում փորձությունների մեջ միսիթարություն պիտի գտնենք, ուժ առնենք նեղությունները դիմագրավելու, բարօր կյանք ու լուսավոր ապագա կերտելու:

Սուրբ Էջմիածնի տոնի այս նվիրական օրը առաքյալի խոսքով պատգամում ենք ձեզ. «Հաստատո՛ւն մնացեք հավատի մեջ, քա՛ջ եղեք, զորացե՛ք: Ձեր ամեն ինչը սիրով թող լինի» (Ա Կորնթ. 16.13–14): Հավատարի՛մ մնացեք քրիստոսահիմն Սուրբ Էջմիածնին, ձեր ինքնությանը: Հաստատակամությամբ պաշտպանեք մեր պատմությունն ու սրբազան մեր արժեքները, մեր հավատքը, սրբությունները և նախանձախնդիր եղեք ազգաշեն ու հայրենիօգուտ բարի գործերի մեջ: Ապրեք համերաշխությամբ, միմյանց հանդեպ հոգատարությամբ և միշտ ընթացեք աստվածահաճո ուղիներով: Հավատում ենք, որ մեր ժողովրդի սերն առ Աստված և նվիրումն առ հայրենին ամուր հիմք ու երաշխիք են մեր համընդհանուր իղձերի ու տեսիլքների իրականացման, մեր խաղաղ ու անվտանգ կյանքի:

Այս հոգեւորոգ օրը Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում ձեզ և Մեր բոլոր զավակներին, որոնք մշտապես, ինչպես և Եկեղեցու դեմ իրականացվող դատապարտելի արշավի այս օրերին իրենց անսակարկ սերն ու աջակցությունն են ցուցաբերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Միասնական աղոթքով հայցենք հավատքի մեր Հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Տրդատ թագավորի բարեխոսությունը, որ Տիրոջ խաղաղությունը հաստատվի աշխարհում, ապահով ու անխոով լինեն մեր հայրենիքն ու աշխարհասփյուռ ժողովուրդը՝ միշտ առաջնորդվելով Սուրբ Էջմիածնից ճառագող աստվածապարգև հավատով ու հույսով: Աղոթենք արցախցի մեր քույրերի ու եղբայրների համար՝ զորակից լինելով նրանց նեղությունների ու դժվարությունների հաղթահարման գործում: Աղոթենք Աղրբեջանի կողմից գերեվարված մեր զավակների ազատ արձակման, ինչպես նաև մեր երկրում հանիրավի կալանավորված մեծանուն բարերար տիար Սամվել Կարապետյանի ազատության համար: Խնդրենք Ամենակալից, որ Իր Սուրբ Աջի պահպանությունն ու հովանին և քրիստոսադրոշմ Սուրբ Էջմիածնի առատ օրհնությունները միշտ տարածյալ լինեն մեր ազգի և հայոց աշխարհի վրա:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերը և խաղաղությունը թող լինեն մեզ և ամենքի հետ: Ամեն:

22 հունիսի, 2025 թ.

Հունիսի 30-ից հուլիսի 4-ը կմատուցվի Սուրբ և Անմահ Պատարագ՝ գերյալների ազատության, նեղյալների մխիթարության և հայրենի երկրի խաղաղության համար

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ առաջիկա շաբաթ՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտի տոնի նախընթաց շաբաթապահքի օրերին, հունիսի 30-ից հուլիսի 4-ը, երեկոյան ժամը 18:30-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում և թեմական առաջնորդանիստ եկեղեցիներում կմատուցվի Սուրբ և Անմահ Պատարագ՝ գերյալների ազատության, նեղյալների մխիթարության և հայրենի երկրի խաղաղության համար: Թող Աստված ունկնդիր լինի մեր աղոթքներին, և Տիրոջ Սուրբ Աջը հովանի լինի համայն աշխարհին, մեր հայրենիքին և մեր ողջ ժողովրդին. ամեն:

Մայր Աթոռում տեղի ունեցավ 9-րդ միաբանական համագումարը

Հունիսի 16–21-ը, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռում տեղի ունեցավ միաբանական համագումար, որին մասնակցում էին Սուրբ Էջմիածնի միաբաններ Հայաստանից և Սփյուռքից, ինչպես և ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքություններից:

9-րդ միաբանական համագումարի խորագիրն էր «Սուրբ Էջմիածին՝ բանալի երկնի արքայության»:

Հունիսի 17-ին՝ միաբանական հավաքի բացման օրը, մասնակիցներին ողջունեցին կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ, Մայր Աթոռի Արխիվի և թանգարանների տնօրեն Հոգեշնորհ Տ. Ասողիկ աբեղա Կարապետյանը և հանձնախմբի անդամ ԱՄՆ Արևելյան Հայոց թեմի փոխառաջնորդ Հոգեշնորհ Տ. Սիմեոն աբեղա Օդաբաշյանը:

Համագումարի մասնակիցներին իր օրհնությունն ու հայրական պատգամը բերեց նաև Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը ողջունեց Սուրբ Էջմիածնում համագումարի առիթով համախմբված Մայր Աթոռի միաբանների և Նվիրապետական Աթոռներից ժամանած եկեղեցականների ներկայությունը՝ ընդգծելով, որ ավանդություն դարձած նման հավաքները բարեպատեհ առիթ են զորանալու աղոթական ոգու մեջ, նաև հնարավորություն՝ անդրադարձ կատարելու Հայ Եկեղեցու և ժողովրդի կյանքը հուզող հիմնախնդիրներին, համատեղ փնտրելու դրանց հաղթահարման ուղիները:

Նորին Սրբությունը, անդրադառնալով քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածնի բացառիկ առաքելությանը, ի մասնավորի նշեց. «Հայոց Եկեղեցին՝ իր հոգևոր կենտրոնով, բոլոր ժամանակներում Տիրոջ լուսեղեն պատգամներն է փոխանցել հայորդյաց, հոգևոր, ազգապահպան իր առաքելությանը զուգընթաց օրհասական պահերին՝



պետականության բացակայության պայմաններում, ստանձնել քաղաքական առաջնորդությունը մեր ժողովրդի և միշտ եղել տերն ու պաշտպանը ազգային իրավունքների և քրիստոնեական մեր սրբազան արժեքների»:

Հայոց Հովվապետը, խոսելով հայրենիքի և ժողովրդի համար ներկայիս դժվարին ժամանակաշրջանի մասին, նաև մտահոգությամբ անդրադարձ կատարեց Հայաստանի վարչապետի կողմից Հայոց Հայրապետի և եկեղեցականության թիրախավորմանը՝ նշելով, որ ծրագրավորված հարձակումները նպատակ ունեն վարկաբեկել հայ եկեղեցականությանն ու Եկեղեցուն, լռեցնել Եկեղեցու ձայնը և նվազեցնել նրա բարձր վարկն ու հեղինակությունը մեր հասարակության մեջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը միաբաններին պատգամեց հայրենիքի և Հայոց Եկեղեցու առջև ծառացած այս նոր փորձությունների հանդիման լինել միասնական, իրենց կոչմանը հավատարիմ և ազգի հավատավոր զավակների սրտերում զորացնել հավատը, միաբանության ու համերաշխության ոգին:

«Այսպես, սիրելի՛ միաբաններ, պիտի կարողանանք ապահովել անվտանգությունն ու անսասանությունը մեր պետականության, կերտել նոր առաջընթացն ու խաղաղ, բարօր կյանքը հայկազյան մեր ազգի և միշտ պայծառ պահել մեր Սուրբ Եկեղեցին: Այս առումով պատասխանատվություն ունենք Աստծո, հայրենիքի և գալիք սերունդների առջև»,— ընդգծեց Նորին Սրբությունը:

Վերջում Հայոց Հովվապետն իր բարձր գնահատանքը բերեց միաբանական համագումարի մասնակիցներին իրենց նվիրյալ և նախանձախնդիր սպասավորության համար՝ աղոթք բարձրացնելով առ Աստված, որ Տերը ապահով ու անվտանգ պահի հայրենի մեր երկիրը, իմաստություն շնորհի մեր ժողովրդին՝ համատեղ ջանքերով հասնելու խաղաղ և լուսավոր հանգրվաններին:

Համագումարի մասնակիցներին ողջունեցին նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Կ. Պոլսի և Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունների ներկայացուցիչները:

Հնգօրյա ժողովի ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները քննարկեցին Եկեղեցու և հայ ժողովրդի առջև ծառացած զանազան մարտահրավերներ, լսվեցին արդի հիմնախնդիրներին առնչվող զեկույցներ և բանախոսություններ:

Միաբան հայրերը մասնակցեցին Արարատյան շաբաթվա Սուրբ Պատարագներին, որոնք ամբողջացան միաբանական ուխտի Սուրբ Պատարագով և Կաթողիկե Սուրբ Էջմիածնի սրբազան տոնակատարությամբ:

Հունիսի 21–22-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, կազմակերպիչ հանձնախմբի անդամները մի խումբ միաբանների հետ հովվական առաքելությամբ մեկնեցին նաև Սյունյաց թեմի համայնքներ: Մայր Աթոռի միաբաններն այցելություններ կատարեցին հայրենիքի պաշտպանության համար նահատակված հերոսների, ինչպես նաև բռնի տեղահանված արցախահայերի, բազմազավակ ու կարիքավոր ընտանիքներին:

Միաբանական համագումարի մասնակիցներն այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, «Եռաբլուր» զինվորական պանթեոն և Կոմիտասի անվան պանթեոն

Հունիսի 16-ին Միաբանական համագումարի առիթով Մայր Աթոռում մեկտեղված Հայաստանի և Սփյուռքի թեմերում ու եկեղեցական կառույցներում սպասավորող Սուրբ Էջմիածնի միաբանները, մինչ համագումարի պաշտոնական մեկնարկը, այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ իրենց խոնարհումը բերելով Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին: Հուշահամալիրում ծաղկեպսակի զետեղումից հետո հոգևոր հայրերը կատարեցին նաև Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Այնուհետև եկեղեցականները մեկնեցին «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու հանուն հայրենիքի իրենց կյանքն ընծայաբերած քաջորդիների հիշատակին և աղոթելու նրանց հոգիների հանգստության ու խաղաղության համար:

Միաբանական համագումարի մասնակիցներն այցելեցին նաև Կոմիտասի անվան պանթեոն՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Կոմիտաս վարդապետի հիշատակին: Միաբանները Հայ Եկեղեցու մեծանուն վարդապետի շիրիմին կատարեցին հոգեհանգստյան կարգ:

Միաբանական համագումարը հանդես եկավ հայտարարությամբ

Հունիսի 16–21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած միաբանական համագումարի մասնակիցները ՀՀ իշխանությունների կողմից վերջին շրջանում հրահրված հակաեկեղեցական արշավի առնչությամբ հանդես եկան հայտարարությամբ:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններս, որ Արարատյան շաբաթվա շնորհաբաշխ տոների առիթով ի մի ենք հավաքվել Սուրբ Էջմիածնում՝ մասնակցելով միաբանական 9-րդ համագումարին, հավատարիմ մեր սուրբ ուխտին՝ որդիական մեր սերն ու անվերապահ նվիրումն ենք հավաստում առ Հայ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Անընդունելի ենք համարում և դատապարտելի Հայաստանի Հանրապետության օրվա իշխանությունների հակաեկեղեցական ու ապազգային ընթացքը՝ իր տարատեսակ դրսևորումներով: Որպես Հայ Եկեղեցու վարդապետաց դաս՝ հորդորում ենք մեր սիրելի հավատավոր ժողովրդին ի Մայր Հայաստան և ի Սփյուռս.

- *Անսասան մնալ իրենց սուրբ և ճշմարիտ հավատքի մեջ՝ որպես նվիրյալ և հավատարիմ զավակներ Մայր Եկեղեցու՝ չտրվելով չարահնար սադրանքներին ու անցողիկ ապազգային դրսևորումներին, պահպանելով ողջախոհությունը, բարեկրթությունը և պարկեշտությունը: Սիրով ու անշեղ հավատով պաշտպանել Հայրենիքի և Եկեղեցու բարձրագույն արժեքները՝ վեր դասելով դրանք անձնական և խմբային շահերից, ի նպաստ ազգի ու պետության միասնության և անդորրի:*
- *Հավատարիմ քրիստոնեական արժեքներին՝ ամուր կանգնել ազգային ինքնության հիմքերի վրա, պահպանել ազգային-հոգևոր դիմագիծը և միասնաբար հաղթահարել արտաքին ու ներքին վտանգներն ու սպառնալիքները՝ համաձայն սուրբ առաքյալի կոչի. «....Միաբա՛ն եղէք, խաղաղութի՛ւն արէք. եւ խաղաղութեան ու սիրոյ Աստուածը թող լինի ձեզ հետ» (Բ Կորնթ. 13:11):*

Կոչ ենք անում հայրենի երկրի իշխանություններին.

- *Դադարեցնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ողջ հոգևորական դասի նկատմամբ հարձակումները, որոնք ոչ միայն վիրավորում են հավատավոր հայորդիների հոգևոր և կրոնական զգացումները, այլ նաև վտանգում են հասարակական համերաշխությունը և կարող են հանգեցնել ծանր հետևանքների՝ վնասելով մեր ժողովրդի, պետության և պետականության անվտանգությանը:*
- *Մեր տարածաշրջանում ծավալվող ռազմական գործողությունների պայմաններում անհրաժեշտ է ամբողջական պատասխանատվությամբ լծվել պետության առջև ծառացած անվտանգության լրջագույն մարտահրավերների դիմագրավմանը, այդ թվում՝ ներհասարակական համերաշխության և ազգային միասնության պահպանման ուղղությամբ՝ ի նպաստ մեր ժողովրդի բարեկեցության:*
- *Հետևողականորեն աջակցել բռնի տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև ձեռնարկել միջոցներ Արցախի պատմական հոգևոր և մշակութային ժառանգության պահպանման համար, որն այսօր կանգնած է ոչնչացման վտանգի առջև:*

Հայրենիքի ու Եկեղեցու առջև ծառացած տարաբնույթ մարտահրավերների պայմաններում Մայր Աթոռի միաբաններս, մեզ զորակից ունենալով Հայ Եկեղեցու Նվիրապետական աթոռների՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունների միաբանություններին, որպես արթուն ծառաներ Ամենակալ Աստծո և հոգևոր սպասավորներ բարեպաշտ հայ ժողովրդի, մեր կոչումի բարձր գիտակցությամբ, միակամ ու միաբան, շարունակելու ենք անձնուրաց կերպով իրականացնել Հայ Եկեղեցու հոգեփրկչական ու ազգապահպան պատմական վսեմ առաքելությունը՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի շինություն Հայաստան աշխարհի»:

Արարատյան շաբաթը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Տոնախմբվեց Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակը

Հունիսի 16-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակը: Տոնական այդ օրը նաև Սուրբ Հռիփսիմե վանքի ուխտի օրն է:

Առավոտյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկեղեցականների թափորը հավատացյալների ուղեկցությամբ, Էջմիածնի հայորդյաց տան սաների թմբուկների զարկերի ներքո շարժվեց դեպի Սուրբ Հռիփսիմե վանք՝ տանելով Սուրբ Հռիփսիմե կույսի մասունքները:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամարի առջև Ամենայն Հայոց Հայրապետը սրբազան Աջով օրհնեց հոգևոր դասին և ներկա բարեպաշտ ժողովրդին՝ այն փոխանցելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետ Ծատուրյանին:

Սուրբ Հռիփսիմե վանքի առջև թափորը դիմավորեցին վանքի հոգևոր սպասավորները և տարբեր վայրերից ժամանած բազում ուխտավորներ՝ Մայր Աթոռի վանորեից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի գլխավորությամբ: Բերկրառատ տոնի առիթով Սուրբ Հռիփսիմե վանքում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Կ. Պոլսի Հայոց պատրիարքության միաբան Հոգեշնորհ Տ. Շնորհք վարդապետ Տոնիկյանը: Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը և բազում ուխտավոր հայորդիներ:

Իր քարոզում պատարագիչ հայր սուրբը, անդրադառնալով օրվա խորհրդին, պատգամեց հավատավոր ժողովրդին հետևել Սուրբ Հռիփսիմյանց կույսերի օրինակին, որոնք առ Աստված իրենց հույսով ու հավատքով արհամարհեցին ժամանակավոր կյանքի բոլոր փորձությունները, գայթակղությունները և անգամ մահը՝ հավատարիմ մնալով քրիստոնեական իրենց ուխտին:

Վերջում հայր Շնորհքը հորդորեց հավատավոր ժողովրդին իրենց աղոթքներում հայցել սրբուհու բարեխոսությունը՝ ամրանալու ու զորանալու հավատքի մեջ, և մշտապես շեն ու անսասան պահել հայոց եկեղեցիները:

Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ վանորեից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի, սրբուհու մասունքակիր Աջով կատարվեց Անդաստանի կարգ:

Տոնախմբվեց Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակը

Հունիսի 17-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակը:

Բերկրառատ տոնի առիթով առավոտյան Վեհարանից եկեղեցականների հանդիսավոր թափորն առաջնորդվեց դեպի Սուրբ Գայանե վանք: Թափորը մինչև Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամար գլխավորեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ նահատակ սրբուհու մասունքն ամփոփող Աջով օրհնելով բարեպաշտ ժողովրդին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մասունքակիր Աջը փոխանցեց Մայր Աթոռի լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետ Ծատուրյանին:

Սուրբ Գայանե վանքի առջև թափորը դիմավորեցին Մայր Աթոռի վանորեից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը, վանքի հոգևոր սպասավորներն ու բազմաթիվ հավատավոր հայորդիներ:

Օրվա խորհրդի առիթով Սուրբ Գայանե վանքում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Իտալիայի հայ համայնքի հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Հարությունյանը:

Պատարագի սրբազան արարողությանը մասնակցում էին միաբանական համագումարի առիթով աշխարհի բոլոր կողմերից Սուրբ Էջմիածին ժամանած Մայր Աթոռի միաբանները և բազմաթիվ ուխտավոր հայորդիներ:

Իր քարոզում հայր սուրբը, անդրադառնալով Սուրբ Գայանյանց կույսերի վարքին ու գործունեությանը, ընդգծեց, որ նրանց նահատակությամբ քրիստոնեության լույսն ու աստվածային ճշմարտությունը սփռվեցին Հայաստան աշխարհում և դարձան առ Աստված իրական սիրո վկաներ:

Վերջում հայր Ներսեսը պատգամեց հավատավոր ժողովրդին մշտապես հայցել Սուրբ Գայանեի բարեխոսությունն իրենց հոգևոր կյանքի զորացման, առ Հիսուս Քրիստոս հավատքով ամրանալու և Տիրոջն անսասանորեն հավատարիմ մնալու համար:

Ս. Պատարագի ավարտին Սուրբ Գայանե վանքի բակում Արտակ եպիսկոպոսի նախագահությամբ սրբուհու մասունքակիր Աջով կատարվեցին հավատացյալների օրհնություն և Անդաստանի կարգ:

Սուրբ Հովհաննես Կարապետի մասունքը տարվել է Շողակաթի վանք



Հունիսի 19-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Հովհաննես Կարապետի և Սուրբ Աթանագինե եպիսկոպոսի տոնը, որը նաև Վաղարշապատի Սուրբ Շողակաթ վանքի ուխտի օրն է:

Սուրբ Հովհաննես Մկրտչի և Աթանագինե եպիսկոպոսի մասունքներն ամփոփող խաչ-մասունքարանն առավոտյան Մայր Աթոռից Սուրբ Շողակաթ վանք տարվեց եկեղեցականների հանդիսավոր թափորով: Թափորը մինչև Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամար գլխավորեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մասունքարանով օրհնելով բարեպաշտ ժողովրդին: Այնուհետև սրբազան մասունքները Նորին Սրբությունը փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետ Ծատուրյանին: Սուրբ Շողակաթ վանքի առջև թափորը դիմավորեցին բազմաթիվ ուխտավորներ՝ Մայր Աթոռի վանորեից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի գլխավորությամբ: Տոնի կապակցությամբ վանքում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Սուրբ Շողակաթ վանքի վանահայր Հոգեշնորհ Տ. Արիս աբեղա Տոնոյանը:

Սուրբ Պատարագի ավարտին Սուրբ Շողակաթ վանքի բակում Արտակ եպիսկոպոսի նախագահությամբ Սուրբ Հովհաննես Մկրտչի և Աթանագինե եպիսկոպոսի մասունքներն ամփոփող խաչ-մասունքարանով կատարվեցին հավատացյալների օրհնություն և Անդաստանի կարգ:

Նշվեց Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնը

Հունիսի 22-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը: Այն Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Կաթողիկե Սուրբ Էջմիածնի հիմնադրման տոնն է:

Բերկրառատ օրվա առիթով Միածնաէջ Մայր Տաճարում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբանական համագումարի մասնակիցները, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների միաբաններ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Հայ Եկեղեցու բարերարներ, Հայաստանի և սփյուռքի տարբեր համայնքներից ժամանած բազմաթիվ ուխտավորներ:

Տոնի առիթով հավատացյալների օրհնության, մխիթարության և երկրպագության համար դուրս էին բերվել նաև Սուրբ Էջմիածնում պահվող Տիրոջ Կենաց Փայտի մասունքը, Աստվածամուխ Սուրբ Գեղարդը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը, Սուրբ Սահակ Պարթև Հայրապետի մասունքը, Սուրբ Գրիգոր Նարեկացու մասունքը, Սկևռայի մասանց պահարանը և Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների մասունքարանը:

Սուրբ Պատարագի ավարտին Մայր Տաճարի զանգակատան առջև կատարվեց Սուրբ Էջմիածնի մաղթանք: Ներկա հավատացյալ ժողովուրդը և եկեղեցականաց դասը աղոթք բարձրացրին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության և հավետ պայծառության համար:

Վերջում Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնի առիթով Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունն ու պատգամը հղեց հավատավոր ժողովրդին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հունիսի 16-ին **Քառասնօրյա պատրաստության շրջանն անցած նորաօծ քահանաներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սույն թվականի մայիսի 4-ին Միածնաէջ Մայր Տաճարում քահանայական ձեռնադրության ու օծման արժանացած և Մայր Աթոռում քառասնօրյա պատրաստության շրջանն անցած նորաօծ եկեղեցականներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետ Ծատուրյանի:

Հանդիպմանը հայր Անանիան Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց նորաօծներին՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունն ու պատգամը ձեռնադրյալներին:

Հայոց Հովվապետը, իր հայրական օրհնությունը փոխանցելով քահանա հայրերին, գոհունակություն հայտնեց Հայ Եկեղեցու անդաստանում արդեն իբրև օծյալ հոգևորականներ իրենց ծառայությունը շարունակելու առիթով: Նորին Սրբությունը կարևորեց եկեղեցականների նվիրյալ ու անձնդիր ծառայությունը՝ ի խնդիր Եկեղեցու հոգեխնամ և ազգապահպան առաքելության արդյունավորման:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը հորդորեց նորաօծներին սերն ու հավատը դարձնել իրենց հոգևոր սպասավորության առանցքը, հանձնառությամբ և եկեղեցականի բարի օրինակով իրականացնել հոգեփրկչական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում:

Հայոց Հովվապետն ընդգծեց նաև, որ նորաօծ հայրերն իրենց ծառայության մեջ կհանդիպեն բազմաթիվ դժվարությունների և մարտահրավերների, որոնց առջև հարկ է չընկրկել, չվհատվել, այլ առ Աստված զորավոր հավատքով, նվիրումով, համբերատարությամբ հաղթահարել դրանք՝ արդյունավետ դարձնելով հոգևոր սպասավորությունը Մայր Եկեղեցու անդաստանում և Սուրբ Հոգու առաջնորդությամբ իրականացնել իրենց հովվական առաքելությունը՝ ի նպաստ հայորդիների հոգևոր կյանքի պայծառության և Եկեղեցու շենացման:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց հոգևորականներին և նրանց ընծայեց ձեռաց խաչեր ու Սուրբ Հաղորդության մասնատուփեր:

Հունիսի 20-ին **ԱՄՆ հայոց արևելյան թեմի ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արևելյան թեմի Բոկա Ռատոնի (Ֆլորիդա) Սուրբ Դավիթ եկեղեցու համայնքի ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Սևակ քահանա Գաբրիելյանի:

Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ տեր Սևակն ընդգծեց, որ ուխտավորները Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել իրենց ուխտը վերանորոգելու և հայրենիքի հետ կապը զորացնելու համար:

Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց հայորդիների՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցի առիթով՝ գոհունակությամբ հաստատելով, որ Սփյուռքի հայկական համայնքների կողմից հաճախ կազմակերպվող ուխտագնացությունները լավագույն առիթ են հոգևոր նորոգության, հայրենաճանաչության և հայրենասիրական զգացումների զորացման: Հայոց Հովվապետը պատգամեց ներկաներին հավատքով զորացած վերադառնալ իրենց համայնքները և նախանձախնդրորեն մասնակից լինել Եկեղեցու հոգևոր ու ազգապահպան առաքելության իրականացմանը:

Հունիսի 25-ին **ՀԲԸՄ տարբեր ծրագրերի մասնակից սփյուռքահայ երիտասարդներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Երևանի «Գլոբալ առաջնորդության» և «Բացահայտիր Հայաստանը» ծրագրերին մասնակից սփյուռքահայ երիտասարդներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ Կենտրոնական վարչության անդամ տիար Վազգեն Յակուբյանի: 64 սփյուռքահայ երիտասարդներ Հայաստան են ժամանել՝ ՀԲԸՄ ծրագրերի շրջանակներում հաղորդակից լինելու հայրենիքի պատմամշակութային ու հոգևոր ժառանգությանը և զորացնելու իրենց կապը հայրենիքի հետ:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունը բերելով հայորդիներին, բարձր գնահատեց Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից իրականացվող հայրենաճանաչության, կրթադաստիարակչական, մշակութային նմանօրինակ ծրագրերը, որոնց շնորհիվ տարբեր երկրներում հասակ առած երիտասարդները հնարավորություն են ստանում համախմբվելու հայրենիքում, հարստացնելու իրենց գիտելիքները և հաղորդ դառնալու հայրենի իրականությանը:

Նորին Սրբությունը պատգամեց ներկաներին լինել ազգային ինքնության կրողը, ամուր պահել սերը հայրենիքի նկատմամբ և օգտակարություն բերել իրենց համայնքների առավել զորացմանն ու հայրենիքի բարօրությանը:

Հայոց Հայրապետը հորդորեց հայորդիներին՝ վերադառնալով իրենց համայնքներ՝ առավել ակտիվ ներգրավվածություն ունենալ ազգային-եկեղեցական կյանքում:

Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ

Հունիսի 30-ին՝ Երեկոյան ժամերգությունից հետո, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ՝ գերյալների ազատության, նեղյալների մխիթարության և հայրենի երկրի խաղաղության համար:

Պատարագիչն էր Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Արցախի պետական և հասարակական գործիչներ, Ադրբեջանում ապօրինի պահվող հայ պատանդների ու գերիների ընտանիքների անդամներ և բազմաթիվ ուխտավոր հայորդիներ:

Սրբազան հայրն իր քարոզում խոսեց մերօրյա դժվարությունների մասին՝ անդրադառնալով նաև անազատության մեջ գտնվող հայորդիներին: «Քրիստոնեության հազարամյա պատմական փորձառությունը հստակորեն ցույց է տալիս, որ բանտը, գերությունը և նեղությունը անբաժան ուղեկիցներն են արդարության ճանապարհի՝ լինի դա որպես հանցանքի արդար հատուցում թե որպես արդարությունը լռեցնելու գործիք: Բանտարկվել են առաքյալները, նրանց աշակերտները, հազարավոր քրիստոնյաներ, և վերջիվերջո նաև մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Պողոս առաքյալի՝ եբրայեցիներին ուղղված թղթում կարդում ենք. «Հիշեցեք բանտարկյալներին, որպես թե դուք բանտարկված լինեք նրանց հետ. հիշեցե՛ք նաև չարչարվածներին, քանի որ դուք էլ մարմնավոր եք» (Եբր. 13:3): Քրիստոնյան երբեք չպետք է մոռանա, որ բանտարկումը և գերությունը հաճախ այս աշխարհի անարդարության և ոչ թե արդարադատության հետևանք են, և որ ազատության մեջ գտնվողները հաճախ հոգևոր ու բարոյական պակաս պատասխանատվություն չեն կրում, քան բանտերում գտնվող իրենց եղբայրները»,— նշեց Վրթանես սրբազանը:

Արցախի թեմի առաջնորդը, խոսելով Ադրբեջանում ապօրինաբար պահվող Արցախի քաղաքական ղեկավարության և ռազմագերիների մասին, ընդգծեց, որ հայ ժողովուրդը կարիք ունի ազգային ու հոգևոր առավել բարձր ինքնագիտակցություն դրսևորելու՝ ի նպաստ հայրենակից եղբայրների ազատության: «Թշնամին նրանց դատում է, որովհետև նրանք իրենց անձով վկայում են Արցախի անկախության իրավունքի մասին: Մենք պետք է գիտակցենք, որ անկախ ամեն ինչից՝ ցանկացած հայ, որ ապրել և գործել է հանուն Արցախի, այսօր կարող էր հանգամանքների բերումով լինել ապօրինի բռնադատյալների փոխարեն»,— ասաց սրբազանը և հավելեց, որ Հայոց Եկեղեցին բազմիցս միջազգային և միջեկեղեցական տարբեր հարթակներում իր արդարացի բողոքի ձայնն է բարձրացրել պատանդառված հայորդիների ապօրինի գերության առնչությամբ:

«Խոր Վիրապի գուբում 13 տարի բանտված էր նաև մեր հավատքի հայրը՝ Սուրբ Գիրգոր Լուսավորիչը, որի նշխարների գյուտին նախորդող շաբաթապահքն է սկսվել այսօր: Այս օրերին, երբ բարեպատեհ առիթն ունենք շաբաթապահքի ամեն օրն ամբողջացնելու Մայր Տաճարում մատուցված Սուրբ Պատարագի խորհրդով, չենք կարող մեր սրտաբուխ աղոթքներում չհիշել նաև անազատության մեջ գտնվող մեր երկու հոգևոր եղբայրներին ու Եկեղեցու նվիրյալ սպասավորներին՝ Միքայել և Բագրատ արքեպիսկոպոսներին, ինչպես նաև ազգային մեծ բարերար ու Հայոց Եկեղեցու նվիրյալ զավակ տիար Սամվել Կարապետյանին՝ մաղթելով, որ ի վերջո հաղթանակեն արդարությունն ու ճշմարտությունը, և նրանք կարողանան Տիրոջով զորացյալ հաղթահարել այս փորձությունները»,— ասաց պատարագիչ սրբազանը:

Ժողովրդին ուղղված իր խոսքում Արցախի թեմի առաջնորդը շեշտեց, որ հարկ է անդրադարձ ունենալ, թե ինչքանո՞վ են կատարում Փրկչի պատգամները, արդյո՞ք ունեն բավարար սեր իրենց եղբայրների ու քույրերի հանդեպ, արդյո՞ք մտահոգված են և աղոթում են գերության մեջ գտնվող հայրենակիցների ու բանտարկյալների համար: Պատարագիչ սրբազանն ընդգծեց, որ մենք ոչինչ չենք կարող պահանջել օտարներից և օտար պետություններից, եթե այսօր չենք միանում տառապյալ ու հալածյալ հայորդիների արդար իրավունքների պաշտպանության գործին:

Վերջում սրբազանը ներկա հավատավոր ժողովրդին հրավիրեց աղոթքով զորակից ու աջակից լինել բոլոր նեղյալներին ու գերյալներին և նրանց ընտանիքներին, մի կողմ դնել ներքին տարաձայնությունները և հետամուտ լինել ազգային միասնության հաստատմանը:

Տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի 2024–2025 թթ. ուսումնական տարվա փակման հանդիսությունը

Հունիսի 30-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի՝ 2024–2025 թթ. ուսումնական տարվա փակման հանդիսությունը:

Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին ՀՀ և Գևորգյան հոգևոր ճեմարանի օրհներգերը: Այնուհետև ներկաներին ողջունեց Գևորգյան հոգևոր ճեմարանի և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Շահե ծայրագույն վարդապետ Անանյանը:

Հայր սուրբը, անդրադառնալով Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում ճեմարանի ունեցած կարևորագույն նշանակությանը, ի մասնավորի ընդգծեց. «Ճեմարանը միայն կրթության օջախ, հայրենապաշտության ու հայրենագիտության ավանդական դպրոց չէ: Այն նախևառաջ Տիրոջ առաքյալների, մարգարեների ու աշակերտների հետևորդների կերտման վայր է, մարդակերտումից անդին՝ հոգեկերտումի օրրան է, այստեղ՝ Հայաստանյայց Առաքելական մեր Մայր եկեղեցու սրտում՝ Սուրբ Էջմիածնում: Իսկ հոգեկերտումի համար միշտ էլ անհրաժեշտ է հավիտենական տեսիլք, ոչ թե ժամերով, րոպեներով ու վայրկյաններով, այլ դարերով և դարաշրջաններով չափվող հուրիրան լույս, որից սնվել, սնվում և սնվելու են մեր Եկեղեցու առաջնորդներն ու սպասավորները: Լույսի այդ կանթեղն այստեղ է՝ ոչ հեռու, քրիստոսատուր տեսիլքով հիմնված Մայր Տաճարի հիմքերում: Ուրիշ տեսիլքի չի կարող ծառայել ճեմարանականն ու ճեմարանավարտ հոգևորականը, ուրիշ ոչ մի լույսով չի կարող բժշկել կյանքից ու աշխարհից պարբերաբար մթնող իր աչքերը, ուրիշ ոչ մի ձայն այդքան հարազատ ու ընտանի չի հնչելու նրա հոգում, քան Սուրբ Էջմիածնի ելևէջը, որը, Սուրբ Գրիգոր Նարեկացու բառերով, «փշրեալ եւ բաշխի ի մասունս անհատս»»:

Հայր Շահեն իր խոսքում հորդորեց ճեմարանավարտ սաներին լինել խիզախ ու քաջ զինվորները Քրիստոսի Սուրբ Եկեղեցու՝ պատրաստ իրենց կյանքի գնով պաշտպանելու նախնիների սրբությունները ու արժեքները:

Վերջում տեսուչ հայր սուրբն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին ճեմարանի նկատմամբ ցուցաբերվող հայրական հոգածության և ուշադրության, ինչպես նաև ճեմարանի ուսուցչական-դասախոսական կազմին իրենց նվիրյալ աշխատանքի համար:



Գևորգյան հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարումներից հետո դասախոսների անունից ներկաներին խոսք ուղղեց պ. գ. թ. Ավետիս Հարությունյանը, իսկ ուսանողության անունից սրտի խոսք ասաց 6-րդ լարանի սան Բարեշնորհ Արման սարկավագ Բաղդասարյանը:

Հանդիսության ընթացքում Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի ձեռամբ պարգևներ հանձնվեցին ուսման մեջ բարձր առաջադիմություն արձանագրած ուսանողներին:

Միջոցառման վերջում իր պատգամը բերեց Նաթան սրբազանը:

Նաթան արքեպիսկոպոսը, ներկաներին փոխանցելով Ամենայն Հայոց Հայրապետի սերն ու օրհնությունը, շնորհավորեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր-կրթական հաստատությունների ուսումնական տարեշրջանի փակման հանդիսության առիթով:

Սրբազան Հայրը գոհունակությամբ արձանագրեց, որ հոգևոր անդաստանում նվիրական ավանդույթներն անխափան շարունակվում են՝ հակառակ հայրենական ու եկեղեցական կյանքը փոթորկող տագնապներին և դժվարություններին:

«Աստծո կոչին արձագանքելն ու դրանով ապրելն է հոգևորականաց պատրաստության կարևոր գործի առանցքը: Ահա թե ինչու առաջնային է ոչ միայն ապագա հոգևորականի գիտելիքը, հոգևոր-ազգային կերտվածքը, այլև նախ և առաջ Տիրոջ կոչին ու պատգամին ականջալուր լինելու, Նրա խոսքն ու պատվերը կյանքում ապրելու և ապրեցնելու կարողությունը: Այդպես են ձեռք բերված գիտելիքն ու հոգևոր փորձառությունը տարեցտարի զորանում, պտղաբերում, դառնում երկնավոր Վարդապետին բոլորանվեր ծառայելու աներեր համոզում ու սկզբունք»,– ասաց Նաթան արքեպիսկոպոսը՝ հավելելով նաև, որ մեր օրոյա հասարակության մեջ ամենատարբեր ապազգային ու հակաքրիստոնեական գաղափարախոսությունները հաճախ չարակամ համառությամբ փորձում են խլացնել Տիրոջ ձայնը, բայց, փառք Աստծո, այն շարունակում է արձագանքել քահանայական ծառայության հանձնառություն ունեցող երիտասարդների ազնիվ հոգիներում:

Սրբազան հայրն ուսումնական տարվա փակման հանդիսության առիթով իր շնորհավորանքները փոխանցեց Գևորգյան հոգևոր ճեմարանի և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի տեսչությանը, գիտակ, փորձառու և եկեղեցասեր դասախոսներին, որոնց այսօր փոխանցվել են ճեմարանի պատմական առաքելությունն ու պատասխանատվությունը՝ դաստիարակելու և կերտելու Քրիստոսի Սուրբ Եկեղեցու արժանի սպասավորներ:

Նաթան սրբազանը մաղթեց ճեմարանականներին, որ Բարձրյալն Աստված առավել պայծառացնի նրանց միտքն ու հոգին, ամրացնի և զորացնի քահանայական վեհ ծառայությանը նվիրվելու նրանց կոչումը, մշտապես լինեն Տիրոջ կանչին ականջալուր, խոհեմ ու նախանձախնդիր սպասավորներ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի խիզախ ու անվեհեր զինվորներ:

Հանդիսությունը եզրափակվեց «Պահպանիչ» աղոթքով:

2024–2025 ուսումնական տարում ճեմարանն ավարտեց 11 սան:

Ընդհանրական աղոթք ապօրինաբար բոլոր ազատազրկվածների համար

Հունիսի 29-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Հայաստանի թեմական եկեղեցիներում ու վանքերում հընթացս Սուրբ և Անմահ Պատարագի հորդոր ուղղվեց հավատացյալներին՝ «Տէր ողորմեա»-ի երգեցողության ընթացքում իրենց անհատական աղոթքը բարձրացնել առ Աստված հայրենի երկրի խաղաղության, ապօրինաբար բոլոր ազատազրկվածների՝ մասնավորաբար Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի, Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի և ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանի համար:

Թող Աստված ունկնդիր լինի հավատացելոց աղոթքներին. ամեն:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նունե և Մանե սրբուհիները

Նունեն և Մանեն Հռիփսիմյանց կույսերից էին, որոնք փախչում են հռոմեացիների հալածանքներից և հաստատվում Վաղարշապատում: Նունեն երկնային շնորհով հայտնվում է Վրաց աշխարհի Մծխիթա քաղաքում (վրացիները նրան Նինո են անվանում) և իր ճգնողական ու բարեպաշտական կյանքը շարունակում այնտեղ: Իր բարի գործերով ու վարքով նա մեծ սեր ու համակրանք է վայելում տեղի բնակչության կողմից: Նրա գործած հրաշքներից պատմվում է հետևյալը: Մի կին, լսելով Նունեի և նրա հավատքի մասին, գալիս է նրա մոտ՝ հիվանդ որդուն բուժելու խնդրանքով: Նունեն ասում է, որ ինքը հրաշք գործել և բժշկել չի կարող, սակայն Աստված, Որին ինքը հավատում և պաշտում է, նման բժշկություններ արել է, և ինքը կարող է աղոթել ու առողջություն խնդրել փոքրիկի համար: Նունեն սկսում է աղոթել, և աստվածային հրաշքով երեխան բուժվում է:

Նունեի մասին լուրերը տարածվում ու հասնում են Վրաստանի թագուհուն՝ Նանային: Նա ևս հիվանդ էր և ցանկանում էր տեսնել Նունեին՝ նրանից բժշկություն ստանալու: Մերժում ստանալով Նունեից՝ գնալ արքայական պալատ թագուհուն տեսնելու (Նունեն չէր ցանկանում թողնել իր ճգնության վայրը և նման ճոխ տեղեր գնալ՝ Նանա թագուհին ինքն է այցելում սրբուհուն: Թագուհին ևս Նունեի աղոթքով առողջանում է: Նա փորձում է բազմաթիվ թանկարժեք նվերներ տալ Նունեին իր ապաքինման համար, սակայն վերջինս հրաժարվում է՝ ասելով, որ նրան բուժել է ոչ թե ինքը, այլ իր Աստված՝ Քրիստոս, և ամենամեծ նվերը կլինի այն, որ նա լսի Աստծու խոսքը և դառնա քրիստոնյա: Թագուհին իր հոժարությունն է հայտնում և երբ վերադառնում է պալատ, այս ամենի մասին պատմում է ամուսնուն՝ Միհրան թագավորին: Նա էլ իր հերթին է առաջարկում թանկարժեք նվերներ ուղարկել սրբուհուն, սակայն Նանան հայտնում է, որ նա մերժել է ընդունել որևէ նյութեղեն բան՝ առաջարկելով լսել իր Աստծու խոսքը և պաշտել Նրան: Բայց կնոջ ասածները Միհրան թագավորը լուրջ չի ընդունում:

Անցնում է որոշ ժամանակ, թագավորը որոշում է գնալ որսորդության, ու հանկարծ նրան և ուղեկիցներին պատում է այնպիսի թանձր մառախուղ, որ նրանք կորցնում են իրենց ճանապարհը: Այս ամենից վախեցած՝ Միհրանը դիմում է իր աստվածներին, սակայն ոչ մի օգնություն չի ստանում: Հիշում է Նանային բժշկած Աստծուն և Նրանից խնդրում օգնություն՝ փոխարենը խոստանալով հավատալ Նրան և ընդունել քրիստոնեությունը: Աստված լսում է թագավորի աղերսանքը, և թանձր մառախուղն անհետանում է:

Տեղի ունեցածի մասին Միհրան թագավորը պատմում է կնոջը: Միասին գնում են Նունեի մոտ, լսում սրբուհու վկայությունները Քրիստոսի, Նրա կատարած հրաշքների մասին: Եվ նրանք իրենց պատրաստակամությունն են հայտնում՝ ընդունելու քրիստոնեությունը: Նունեի խորհրդով Վրաստան են կանչվում հոգևորականներ, որոնք էլ Կուր գետում մկրտում են թագավորին ու թագուհուն, մեծամեծներին և ամբողջ արքունիքին ու պալատականներին: Նրանց օրինակով ժողովուրդը ևս քրիստոնեություն է ընդունում: Հենց Մծխիթա քաղաքում էլ կառուցվում է վրացական առաջին եկեղեցին:

Նունեն մինչև իր կյանքի ավարտը շարունակել է իր առաքելությունը և մահացել 340 թ. (մահվան տարեթիվը հիշատակվում է «Բառարան Սրբոց»-ում): Հետագայում սրբուհու գերեզմանի վրա կառուցվել է եկեղեցի, որն այժմ Վրաստանի հայտնի ուխտավայրերից է:

Մանե սրբուհին հռոմեացիների հալածանքներից փախչելուց և Հայաստան գալուց հետո որոշում է հաստատվել Եկեղյաց գավառում՝ Սեպուհ լեռան վրա: Ի տարբերություն Նունեի՝ նա քրիստոնեական քարոզչությամբ չի զբաղվում, այլ Սեպուհ լեռան վրա գտնում է մի քարայր, որտեղ շարունակում է ապրել ճգնավոր կյանքով: Աստվածային զորությամբ նա կարողանում է դիմակայել բոլոր փորձություններին և բնության պատճառած նեղություններին: Շատ տարիներ Մանեն այդպես է անցկացնում՝ աստվածային աղոթքով և ճգնությամբ: Պատմում են՝ մի անգամ Գրիգոր Լուսավորիչը որոշում է առանձնանալ, և նրան քայլերը տանում են դեպի Սեպուհ լեռան քարայրը: Երբ մոտենում է քարայրին, արդեն ծեր կույսը ձայնում է. «Այժմ մի՛ մոտեցիր, այլ երեք օր հետո արի»: Երեք օր անց Լուսավորիչը քարայրում գտնում է Մանե սրբուհու անշնչացած մարմինը: Նրան հենց այնտեղ էլ թաղում է, և ինքն էլ շարունակում է ճգնել այդ քարայրում, որը հետագայում անվանում են Մանյա այր:

Նունե և Մանե կույսերի հիշատակությունը նշվում է Կաթողիկեի տոնի հաջորդ երեքշաբթի օրը:

Լիլիթ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Յակոբ Պատրիարք Նալեան.
Մեղքերու մասին ընդհանրապէս

Սկիզբը՝ 2025 թ. ապրիլ Ա, թիւ 7 համարում

ԽՆԴԻՐ Ը
Մահացու չորրորդ մեղքի մասին, որ ծուլութիւնն է

Ծուլութիւնը որևէ մէկ գործ քաջաբար կատարելու թուլութիւնն է: Քաջաբար եւ արիաբար կատարելիք գործերն են առաքինութիւնները, ինչպէս նաեւ բնութեան յարմար եւ անանգոսնելի կիրառութիւնները: Կամ՝ ծուլութիւնն այն է, որ մարդ թէեւ կրնայ առաքինութիւն գործել ու զօրանալ, սակայն ահէն ու երկիւղէն կը վախնայ կամքով եւ չի՛ մօտենար՝ ըսելով, թէ դժուար է: Բացատրեմ. կրակ չի՛ վառեր, որովհետև հրդեհ կ'ըլլայ եղեր. հաց չ'ուտեր, որովհետև ակռաներս կը մաշին եղեր: Տակաւին կը յուսահատի առաքինութեան դժուարութենէն՝ չյուսալով Աստուծոյ. կարծես թէ կը կամենայ ու չի՛ կամենար. թէ՛ կը տեսնէ, թէ՛ կոյր է. թէ՛ կենդանի է, թէ՛ մեռած: Այսպիսի ծոյլ մարդուն Յովհաննէսը իր տեսիլքին մէջ գաղջ կը կոչէ: Որովհետև, ինչպէս գաղջ ջուրը մարդուն փսխել կու տայ, այդպէս ալ ծոյլ մարդուն արարքները փսխել կու տան զՔրիստոս. [իսկ] Քրիստոս, անիծելով ծոյլ մարդը, կը փսխէ զայն եւ դուրս կը նետէ աշխարհէն, եկեղեցիէն եւ Արքայութենէն:

Ծոյլ մարդուն համար բնաւ դիւրին բան չկայ, քանի որ ինչ գործ ալ թելադրես անոր, կ'ըսէ, թէ դժուար է: Չ'ըսեր, թէ ծոյլ է, այլ գործը որպէս պատճառաբանութիւն կը բռնէ: Ինչպէս Սողոմոն Իմաստունը կ'ըսէ, թէ՝ երբ ծոյլին ճամբայ ղրկես, կ'ըսէ, թէ ճամբուն վրայ առիւծ կայ, իսկ հրապարակին վրայ՝ գայլ: Ծոյլը կը նախատուի չնչին մրջիւնէն. Սողոմոն Իմաստունը կ'ըսէ, թէ՝ ո՛վ վատ, մրջիւնին գնա՛ եւ անկէ սորվիր, թէ ինչպէս գործունեայ է, որ ամառ ատեն ձմեռուան պաշարը կը պատրաստէ [կը հաւաքէ]: Իսկ ծոյլը ձեռքը կերակուրին մէջ կը մխէ, բայց բերանը տանելու համար կը դժկամի:

Արդարև, ծուլութիւնը չար է եւ վատ:

Նախ՝ որովհետև Աստուծոյ կը հակառակի, որ մարդուն գործունեայ ստեղծեց ու դրախտին մէջ դրաւ՝ գործելու համար, իսկ դրախտէն ելլելէն ետք՝ իր երեսին քրտնքով իր հացը ուտել [պատուիրեց]:

բ. Քրիստոսէ կ'անիծուի, ինչպէս տերևալից, բայց անպտուղ թզենին. քանի որ ծոյլը քրիստոնեայ կը ձևանայ, իսկ ծուլութեամբ անհաւատի կը նմանի:

գ. Բոլոր արարուած բաներէն կը յանդիմանուի, որոնք Աստուծոյ հրամանով կան՝ կանգուն են. արեգակէն, լուսինէն, աստղերէն, երկինքէն, երկիրէն, գազաններէն ու անասուններէն, նոյնիսկ չար ու գող մարդոցմէ կը յանդիմանուի, որովհետև գողը մինչև կախաղան բարձրանալը կ'աշխատի:

դ. Կը կորսնցնէ այս պատուական եւ արժէքաւոր ժամանակը, որ լուսաւոր է, բայց չի՛ ընթանար, այլ կը սպասէ գիշերը՝ այս կեանքէն ետքի ժամանակը, երբ մարդ այլևս չի՛ կրնար գործել, ինչպէս յիմար կոյսերը: Ժամանակէն աւելի պատուական բան չկայ, եւ ո՛չ ալ աւելի վատ բան կայ, քան ժամանակի կորուստը:

ե. Ծոյլը վաճառականութեան ժամանակը կը կորսնցնէ, յետոյ կը մուրայ, սակայն ո՛չ ոք կու տայ իրեն:

զ. Ամէն տեսակի մոլութիւններու տուն կ'ըլլայ եւ մեծ մեղքերու մայրաքաղաք, ինչպէս կ'ըսէ Սողոմոնը. ծոյլին դաշտէն անցայ, եւ անիկա փուշով լեցուն էր:

է. Սատանային բնակարան կ'ըլլայ, որովհետև ծոյլ մարդը սատանային համար փետուրներով լեցուն բարձ է, ուստի Քրիստոս ըսաւ, թէ՝ դեւը դուրս ելլելով կը շրջի, ուրիշ տեղ հանգիստ չի՛ գտներ, ապա կը դառնայ ծոյլին մօտ եւ զայն պարապ կը տեսնէ, որով կը լեցնէ զինք եօթ մահացու մեղքերով, որոնք կը կոչուին դևեր եւ չարագոյն այսեր:

ը. Ծոյլը անպարիսպ քաղաք է, որ ամէն կողմերէն բաց է մեղքերուն համար [դիմաց]:

թ. Ծոյլը զօրաւոր է չարութիւն գործելու եւ թմրած՝ բարիք գործելու համար. քաջ է հիւանդանալու եւ դանդաղ՝ բժշկուելու համար:

ժ. Ծոյլը կերած հացին արժանի չէ, որովհետև Պօղոս առաքեալ կ'ըսէ. այն ձեռքը, որ չի՛ վաստակիր [աշխատիր], թող չուտէ: Ծոյլը ծանր է. շուտ դժոխք կ'իջնէ, թեթև չէ, որ երկինք ելլէ: Ծոյլը տապան չի՛ մտներ, որպէսզի փրկուի, ուստի ջրհեղեղին մէջ կը խեղդուի:

Ի վերջոյ, ծոյլ մարդը շուտով կը կորսնցնէ հաւատքը, քանի որ եթէ Պետրոս առաքեալը զօրաւոր կերպով աղօթած ըլլար Քրիստոսի մատնութեան գիշերը, Կայիափայի տան մէջ չէր ուրանար Տէրը:

Ծոյլը դատարկ է բարի գործերէ
եւ լեցուն է փուշի խայթոցներէն:
Ինքն իր մէջ դժոխքին հուրը կը վառէ,
դևերուն մէջ կը քնանայ:

ԽՆԴԻՐ Թ
Մահացու հինգերորդ մեղքի մասին, որ ագահութիւնն է

Ագահութիւնը արծաթի նկատմամբ անյագ սէրն է եւ ամէն ինչ կորսնցնելու պատճառը, որովհետև ով որ ագահ կ'ըլլայ, նոյնն է՝ թէ անկուշտ եւ անյագ է ու կը կարծէ, թէ արծաթով հոգին կը լեցուի, սակայն հոգին զԱստուած ընդունող է իր մէջ. միայն Աստուած կրնայ լեցնել զայն: Իսկ ով որ կը կամենայ արծաթով իր հոգին լեցնել, կարծես թէ փոխանակ պատուական եւ անգին գանձի՝ իր հոգին աղբով կը լեցնէ, եւ արծաթը սիրելով՝ կռապաշտ կ'ըլլայ, ինչպէս կ'ըսէ Սուրբ Պօղոս առաքեալը: Արծաթը շուն մըն է, որ երկու մարդոց կը հետևի, եւ տեսնողներէն ո՛չ ոք գիտէ, թէ շունը, երկու տէրերու հետևելով, ի վերջոյ որո՞ւնն է. այլ երբ այդ երկու մարդիկը բաժնուին, տե՛ս, թէ շունը որո՛ւ կը հետևի, ուրեմն անոր է: Այս երկու տէրերը աշխարհն ու մարդն են. երբ մարդը կը մեռնի ու աշխարհէն կը բաժնուի, արծաթը աշխարհին մէջ կը մնայ, եւ այդ ատեն յայտնի կը դառնայ, թէ որո՛ւ է այդ հարստութիւնը. եթէ մեռնողը իր հետ տարաւ, ի՛րն է, իսկ եթէ չտարաւ, աշխարհինն է: Հազա՜ր ափսոս. առաքինութիւնը եւ իմաստութիւնը, որ մերն են, անոնց մասին մտածող չկայ, իսկ հարստութիւնը, որ մերը չէ, զայն սիրողները ինչքան ուշադրութիւն կը դարձնեն անոր: Ինչքան ալ հարստանաս, չես կրնար Սողոմոն կամ Օգոստոս Կայսր ըլլալ: Սողոմոնը ամէն ինչէ ետք գիտցաւ ունայն ըլլալը [հարստութեան եւ ամէն ինչին], ըսաւ, թէ՝ ունայնութիւն ունայնութեանց, ամէն ինչ ունայն է:

Արդարև, բա՛ց աչքդ եւ տե՛ս ագահութեան ու արծաթասիրութեան չարութիւնը: Բոլոր չարիքներուն արմատը արծաթասիրութիւնն է, կ'ըսէ Պօղոս առաքեալ: Ո՞վ գող եւ զԱստուած մատնող դարձուց Յուդա առաքեալին. արծաթասիրութիւնը: Արծաթասիրութիւնը փորձութիւններուն մունետիկն ու հրաւիրողն է, որովհետև անոնք, որոնք հարստանալ կը ցանկան, փորձութիւններու մէջ կ'իյնան: Ագահին մեծ կուռքը արծաթասիրութիւնն է, քանի որ հաւատքը, յոյսն ու սէրը, որ Աստուծոյ պիտի տար, արծաթին կու տայ: Դարձեալ, ագահութիւնը գողութեան յորդորիչ է, ստութեան վկայ, օրէնքներու քակտող, բոզութեան եւ շնութեան պատճառ, կռիւի ու պատերազմի բորբոքող:

Արդարև, ագահութիւնը բազմաթիւ չարիքներու պատճառ է:

Նախ, քանի որ վա՛յ կը բերէ մարդու գլուխին, որովհետև Աստուած Տէր է, իսկ մենք՝ ծառայ. Աստուած առատաձեռն ու մեծահոգի է, իսկ ծառան՝ ժլատ. եւ վա՛յ ժլատ ծառային, որուն տէրը առատաձեռն է:

բ. Ագահը միշտ կարօտ կը զգայ, որովհետև աղքատը բազմաթիւ ինչքերու կարօտ է, իսկ ագահը՝ ամէն ինչի:

գ. Ագահը յիմար վաճառական մըն է, որ Արքայութիւնն ու զՔրիստոս քիչ բանի դիմաց կը ծախէ: Ագահը Յուդայէն աւելի վատ է, որովհետև ան երեսուն արծաթի դիմաց ծախեց Տէրը, իսկ ագահը երբեմն մէկ հողի համար իր հոգին ու հաւատքը կը ծախէ:

դ. Ագահը արծաթի նկատմամբ ունեցած սէրէն կը մաշի ու կը հալի, որովհետև հարստութիւնը աշխատանքով կը վաստակուի, երկիւղով կը պահուի ու ցաւով կը կորսուի: Յաճախ ագահը կը վաստակի եւ օտար գողերու ու չար զաւակներու կը ձգէ վաստակը:

ե. Ագահը սարդի կը նմանի, որ ճանճ որսալ ըսելով՝ ինքն իր աղիքը իր փորին մէջ կը դատարկէ:

➥ *էջ 8*

Թմրամոլությունը և քրիստոնեական բժշկությունը

Թմրամոլությունը՝ թմրամիջոցների չարաշահման պատճառով առաջացող ախտաբանական երևույթը, ներկա ժամանակներում գրեթե բոլոր հասարակությունների սոցիալական, առողջապահական, բարոյական և հոգևոր ծառագույն մարտահրավերներից է: Թմրանյութերի առաջացրած կախվածությունների հետևանքով մերօրյա աշխարհում երկրաչափական սրընթաց պրոգրեսիայով՝ առաջատվությամբ, աճում են ծանր հանցագործությունները. մի շարք երկրներում անգամ դրանք հասնում են անկառավարելի ծավալների՝ ուղղակիորեն մեծացնելով շորթումների, կողոպուտների, սպանությունների, ինքնասպանությունների և տարատեսակ այլ անօրինական երևույթների արատավոր դրսևորումները: Այս մոլուցքի քայքայիչ ծուղակում հայտնված մարդկային հազարավոր ճակատագրեր խեղվում են, փլուզվում բազում ընտանիքներ, տարբեր հասարակություններ խորապես ընկղմվում են բարոյահոգևոր ճգնաժամի մեջ: Ահա թե ինչու է թմրամոլությունը 21-րդ դարի քրիստոնեության և, առհասարակ, որևէ հոգևոր համակարգի ամենակնճռոտ խնդիրներից մեկը:

Հասկանալու համար, թե ինչ գնահատական է տրվում թմրամոլությանը քրիստոնեության շրջագծում, հարկ է նախևառաջ ճշտել՝ որտեղի՞ց է ծագում այս երևույթը, ինչո՞ւ է այն լայնորեն տարածված մեր օրերում, անվտանգային ինչ սպառնալիքներ կարող է ներկայացնել այս կախվածությունը մարդկանց և պետությունների համար:

Նախ՝ «թմրանյութ»՝ «նարկոտիկ», եզրույթը ծագել է հունարեն «νάρκη» (narkē) բառից, որը նշանակում է «ընդարմություն», «զգայության կորուստ» և անգամ «բթություն»: Այս բառը պատմականորեն կիրառվել է՝ նկարագրելու նյութերի այն տեսակները, որոնք ազդում են կենտրոնական նյարդային համակարգի վրա՝ թեթևացնելու ցավը, առաջացնելու թմրածություն և հանգստություն: Այս առումով՝ «նարկոտիկ» եզրույթը լայնորեն կիրառվել է հատկապես բժշկագիտության ոլորտում: Ներկա օրերում, սակայն, թմրանյութ կամ «նարկոտիկ» բառերը սոցիալական լայն միջավայրերում առաջին ընկալմամբ գերազանցապես կապվում են հիվանդագին կախվածության, մոլուցքի, հոգեմետ նյութերի չարաշահումների հետևանքով առաջացած անկառավարելիության հետ: Թմրանյութերը հաճախ անդառնալի ազդեցություն են թողնում մարդու ուղեղի ու մարմնի վրա՝ աղճատելով օբյեկտիվ իրականության ընկալումը, հանգեցնելով հոգեվիճակի անկայունության, տրամադրության անկման, գիտակցության և վարքագծի շեշտակի փոփոխումների:

Ցավալի փաստ է, որ թմրանյութերի տարածվածությունը մերօրյա աշխարհում հատել է կառավարելիության շեմը՝ ընդհուպ հասնելով վտանգավորության եզրագծին: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության՝ 2024 թվականի հունիսի 26-ին՝ Թմրամիջոցների չարաշահման և անօրինական շրջանառության դեմ պայքարի միջազգային օրը ներկայացված զեկույցի՝ աշխարհում ապրում է գրեթե երեք հարյուր միլիոն թմրամոլ: Նշյալ ծավալներն ընդգրկում են թմրամոլության խանգարումներ ունեցող անհատներից մինչև հոգեխթանիչ նյութերի ապօրինի շրջանառության ու կազմակերպված հանցագործությունների հետևանքով տուժած մարդիկ: Նույն՝ նախորդ տարում, համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տարեկան վիճակագրության, աշխարհում գրեթե վեց հարյուր հազար մարդ է մահացել թմրանյութերի գերչափավորումից կամ դրանից ածանցյալ այլ հիվանդություններից: Ներկայացված թվերը, իսկապես, մտահոգիչ են և գործունեության լայն դաշտ են բացում թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր բժշկության մասնագետների համար:

Վերադառնալով խնդրի հոգևոր-կրոնական կողմին՝ հարկ է արձանագրել, որ թմրամոլությունը կախվածություն է և պատկանում է կախվածությունների քիմիական կամ նյութական խմբին: Այս խմբի մաս են կազմում նաև, օրինակ, ալկոհոլային, ծխախոտ/նիկոտինային, դեղորայքային (որոշ ցավազրկողներ, հանգստացնողներ կամ քնաբերներ) կախվածությունները: Գոյություն ունեն նաև կախվածությունների այլ ձևեր, օրինակ՝ հոգեբանական կամ վարքային տիպի կախվածությունները, որոնց շարքին են դասվում խաղային (օնլայն խաղեր, խաղատներ և այլն), ինտերնետային կամ սոցցանցային (համացանցում ժամանակի անկառավարելի վատնում, TikTok, Instagram և այլն), մոբայլ հեռախոսային (սմարթֆոններում ծանուցումների որոպեական ստուգում), գնումների (մշտապես գնումներ կատարելու ցանկություն), սննդային և սեռական կախվածությունները:

Այս առումով որևէ տեսակի կախվածության վերաբերյալ քրիստոնեությունը հանդես է գալիս հստակ դիրքորոշմամբ. կախվածությունը մեղք է: Իսկ ինչո՞ւ: Որովհետև այն ստրկացնում է մարդուն՝ աստիճանաբար խլելով նրա ազատությունը, ժամանակը, հուզական հավասարակշռությունն ու առողջությունը, անձի հարաբերական անկախությունը, ծայրահեղ պարագաներում՝ անգամ բանականությունը: Նշյալ ազդեցությունների մասին հավելյալ խոսք կամ ապացուցողական փաստարկներ ներկայացնելու կարիք չկա, ըստ երևույթին, քանի որ մերօրյա աշխարհում յուրաքանչյուր ոք անձնական օրինակով կարող է փաստել, թե որքան ծանր ազդեցություն է թողնում իր վրա որևէ տեսակի կախվածության զոհ լինելը:

Աստվածաբանական տեսանկյունից քրիստոնեությունը մեծ կարևորություն է տալիս մարդու անձի սրբության և արժանապատվության պահպանմանը, որովհետև մարդը՝ որպես արարչության գագաթնակետ, կրում է Աստծու պատկերը (Ծնն. 1:27): Այս հանգամանքը հրամայական պատգամ է ուղղում յուրաքանչյուր քրիստոնյայի՝ հարգանքով և խնամքով վերաբերվելու սեփական մարմնին, որտեղ բնակվում է Աստված, քանզի, ըստ Պողոս առաքյալի, մարդկային մարմինը Սուրբ Հոգու տաճարն է (Ա Կորթ. 6:19–20): Անարգելով սեփական մարմինը՝ քրիստոնյան անարգում է իր Արարչին՝ Աստծուն, ուստի ամեն ոք անձնական պարտավորություն ունի սրբությամբ հոգ տանելու իր մարմնի մասին: Այս առումով՝ ոչ բժշկական նպատակներով թմրանյութերի օգտագործումն ուղղակիորեն հարվածի տակ է դնում մարդու առողջությունը և, հետևաբար, վնասում Տիրոջ սուրբ բնակատեղին: Սուրբ Գիրքը հաճախ է զգուշացնում ընդարմության վտանգի մասին՝ ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր առումով: Պետրոս առաքյալը քրիստոնյաներին հորդորում է մշտապես զգոն լինել՝ ասելով. «Արթո՛ւն եղեք, հսկե՛ք, քանի որ ձեր ոսոխը՝ սատանան, մռնչում է առյուծի պես, շրջում և փնտրում է, թե ո՛ւմ կուլ տա» (Ա Պետ. 5:8): ➥ *էջ 8*

Թմրամոլությունը և քրիստոնեական բժշկությունը

↩ էջ 7

Հիսուս Ինքն էլ աշակերտներին զգուշացնում էր արթուն լինել և աղոթել՝ փորձության մեջ չընկնելու համար (տես Մատթ. 26:41): Արթնության վիճակը, որն այդքան կարևորվում է Սուրբ Գրքում, այլ բան չէ, քան պատրաստվածություն, հոգեմարմնավոր ամրություն, ուժ և զորություն: Այսպիսի վիճակում մարդ կարող է լինել միայն ու միայն թե՛ հոգևոր կարգապահության և թե՛ մարմնական հարաբերական բարձր առողջության պայմաններում, որովհետև մարմնի տկարությունը, թուլությունն ու գայթակղություններին ենթակայությունը հարվածում են հոգու ամրությանն ու արթնությանը:

Իսկ ի՞նչ է առաջարկում քրիստոնեությունն այն մարդկանց, որոնք, այնուամենայնիվ, մեղանչել են Տիրոջ և սեփական անձի դեմ՝ հակվելով մահաբեր այդ մոլուցքին: Պատասխանը մեկն է՝ բժշկություն՝ Աստծու հետ մերձեցմամբ:

Հիսուս Իր քարոզչության և գործունեության ամբողջ ընթացքում կատարում էր զարմանահրաշ բժշկություններ՝ ապաքինելով հաճախ մեղքի պատճառով հիվանդության ճիրաններում հայտնված մարդկանց: Աստված չէր հրաժարվում մարդկանցից, որոնք իրենց կյանքի ինչ-որ դրվագում հրաժարվել էին Աստծուց: Այս հանգամանքն է, որ ուժ է տալիս բոլոր մարդկանց՝ թմրամոլներից մինչև այլ կախվածությունների ենթակա անձինք, ուժականություն գտնելով՝ թողնելու մեղքի կորուսաբեր ընթացքը և վերստին իրենց երեսը դարձնելու առ Աստված: Թեպետ թմրանյութերի օգտագործումը կամ չարաշահումը մարդու անձնական ընտրությունն է, սակայն այն ունի նաև հոգևոր խոր դրդապատճառներ: Դեպի թվացյալ հաճույքը մղվելու ցանկությունը չէ, որ մարդկանց քաշում է թմրամոլության ճահիճ: Կախվածության այս տեսակին մարդիկ հակվում են, քանի որ խաբվում և հավատում են, թե դրա միջոցով կարող են մեղմել հոգեկան ցավն ու տառապանքը, վերացնել սթրեսը, հոգեբանական վերքերն ու ընտանեկան խնդիրները, հաղթահարել սոցիալական միջավայրի (ընկերներ, աշխատավայր, համայնք, ենթամշակութային խմբեր և այլն) բացասական ազդեցությունները:

Վերոնշյալ խնդիրների մեծամասնությունը, սակայն, ունի բացառապես հոգևոր հիմքեր և պատճառներ: Ցավի և ներքին դատարկության զգացողություններն ուղղակի հետևանք են Աստծու հետ հաղորդակցության տկարության, որովհետև մարդը սնվում է ոչ միայն հացով, այլև բանով՝ Աստծու խոսքով: Ասել է թե՝ առանց սրանցից որևէ մեկի՝ մարդկային կյանքը դատապարտված է մահվան ու կորստյան, և սա է պատճառը, որ աշխարհում հազարավոր մարդիկ Աստծու հետ իրենց հարաբերության բացակայությունը փորձում են լրացնել այլընտրանքային և կեղծ աղբյուրների միջոցով:

Թմրանյութերի պատճառած ժամանակավոր հաճույքի վիճակը կարող է թվացյալ զգացողություն ստեղծել, թե տառապանքն ու խնդիրները նահանջել են կամ վերափոխվել երանավետության, մինչդեռ դրանք շատ ավելի խոր արմատներ են գցում ու մարդուն ընկղմում ճգնաժամի՝ շատ ավելի խոր ճահճի մեջ: Օգոստինոս Երանելին իր «Խոստովանություններ»-ում նշում է. «Դու մեզ ստեղծեցիր քեզ համար, Տեր, և մեր սրտերն անհանգիստ են, մինչև չհանգչեն Քեզանում»: Սուրբ Օգոստինոսի այս խոսքերը, իսկապես, դիպուկ են նկարագրում մարդկային այն հոգեվիճակը, որը մշտապես ձգտում է խաղաղություն, կայունություն գտնելու և հաղթահարելու հոգին ալեկոծող փոթորկումները: Այս անհանգստությունը, սակայն, երբ չի բավարարվում հոգևոր ճշմարիտ հարաբերությամբ և կարող է դրսևորվել կործանարար և թյուր հետևանքներով: Ահա թե ինչու է Եկեղեցին աղոթքի, ծոմապահության և համայնքային օրինակելի կարգապահության միջոցով մարդկանց փորձում հաղորդել հոգևոր ամբողջական բավարարվածություն. մի բան, որը չի կարող տրվել որևէ տեսակի թմրանյութի կիրառությամբ:

Շատ հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ մարդն իր ներաշխարհը «բժշկելու» համար միջոցներ է փնտրում արտաքին աշխարհում՝ նյութական կամ սննդական միջոց ճաշակելու ճանապարհին: Ըստ երևույթին, այս ձգտումը դեպի սնունդը, ալկոհոլը, ծխախոտն ու թմրանյութերը ունի վաղագույն ակունքներ՝ հասնելով մինչև Եդեմի պարտեզ: Ի վերջո, առաջին մարդիկ ևս փորձեցին իրենց հոգևոր ունայնությունը լրացնել արտաքին նյութական առարկայի՝ պտղի ճաշակումով և այդ պտղի հետ նույնանալով: Իհարկե, սա շատ հետաքրքիր հանգամանք է, մանավանդ երբ այն դիտում ենք քրիստոնեական փրկագործության լույսի ներքո, որտեղ Քրիստոս մարդու փրկության և հավիտենության համար ուրվագծում է միայն մեկ ճանապարհ՝ Իր մարմնի և արյան ճաշակումը: Սրբազան այս խորհուրդը նույնպես կատարվում է նյութական երկու առարկայի՝ հացի և գինու կիրառությամբ, բայց մնացած բոլորբոլոր նյութերի նկատմամբ առկա մեկ տարբերությամբ. հացը և գինին, Պատարագի ժամանակ սրբագործվելով, դադարում են լինել նյութեր՝ դառնալով Քրիստոսի իրական և ճշմարիտ մարմինն ու արյունը: Եվ Պատարագի սուրբ խորհրդի ժամանակ՝ նախքան Հաղորդության բաշխումը, քահանան արտասանում է. «Ի սուրբ, ի սուրբ, պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում: Սա է Կեանք, Յոյս, Յարութիւն, Քաւութիւն եւ Թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ: Սաղմոս ասացէք երկնաւոր Թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կառս քերովբէականս»: Ուշադրություն դարձնենք կյանք, հույս, հարություն, մեղքերի թողություն խոստումներին: Մի՞թե սրանք հոգևոր այն բաղձալի բոլոր հանգրվանները չեն, որոնց բացակայությունը մարդիկ փորձում են գտնել թմրանյութերի և զանազան այլ միջոցների մեջ: Մի՞թե հստակ չէ, որ դրանք տրվում են միայն Աստծու կողմից՝ Հաղորդության միջոցով, և դրանից դուրս ամեն բան ունայնություն է:

Ահա սա է քրիստոնեության առաջարկած բժշկություն-փրկությունը, որ ուղղված է ոչ միայն թմրամոլներին, այլև ամեն տեսակի կախվածությունների զոհերին: Առողջացումը՝ թե՛ բժշկական, թե՛ հոգևոր իմաստով, հնարավոր է: Բազմաթիվ պատմություններ կան կախվածությունը հաղթահարած անձանց մասին, որոնք հավատքի և համառության շնորհիվ վերակառուցել են իրենց կյանքը և այժմ օրինակ են ծառայում ուրիշների համար: Նմանատիպ պատմությունները հիշեցնում են Սուրբ Գրքի հարության հրաշքը, որը ծագում է մահվան ու գերեզմանի հուսահատության խավարում: Ուստի պետք չէ տրվել անհուսությանը, պետք չէ կարծել, թե որևէ մեղք ավելի զորավոր է, քան Աստծու ողորմածությունը: Փոխարենը պետք է մշտապես ապավինել Աստծուն, փորձել ընկնելուց հետո ոտքի կանգնել և շարժվել առաջ, քանի որ դա են մեզ սովորեցնում Սուրբ Գիրքը և Քրիստոսի կյանքի ամբողջական պատմությունը:

Թմրամիջոցների չարաշահման աղետալի հետևանքներից տառապող ներկա աշխարհում քրիստոնեությունն իր ձեռքն է մեկնում հոգնաբեկ ու թշվառ բոլոր հոգիներին՝ սիրո, ջերմության և հավատքի զորության անհաղթելի ուժով վերագտնելու մարդու մեջ ի բնե դրված Աստծու պատկերը:

Արման սրկ. ԲՈՒՆԱՐՋՅԱՆ
Արմինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեղքերու մասին ընդհանրապէս

↩ էջ 7

Դարձեալ, ագահութիւնը ծակ կարասի կը նմանի, դժոխքի, տգրուկի, ծովու եւ կրակի, որ կշտանալ չեն գիտեր: Տակաւին, ագահը ջրգողի կը նմանի, որ ինչքան խմէ, այդքան կը ծարաւնայ:

Ագահութեան չար զաւակները ասոնք են.

Նախ՝ խստասրտութիւն, որ է քարասրտութիւն:

Երկրորդ՝ բռնութիւն, որ է ուրիշներուն եղած բաները յափշտակել:

Երրորդ՝ անհանգստութիւն, որ է շահի նկատմամբ սէր ու ցանկութիւն:

Չորրորդ՝ սուտերդմնութիւն, որ գնած ու ծախած ատեն կ'ըլլայ:

Հինգերորդ՝ պատրանքը եւ խաբելը՝ կեղծաւոր խօսքով:

Վեցերորդ՝ խառնակչութիւն, որ մարդուն կը խաբեն իր աչքերուն առջև:

Եօթներորդ՝ մատնութիւն, որ կ'ըլլայ խաբուածին բացակայութեան ժամանակ:

Դարձեալ, ագահը [ուրիշները] կը զրկէ Աստուծմէ, որովհետև Անոր՝ իրեն տուած բարիքը չի՛ բաշխեր անհրաժեշտ եւ պիտանի կերպով՝ աղքատներուն տալով: Կը զրկէ ինքն իր մարմինը, քանի որ մնայուն կերպով խնայողութիւն ընելով՝ կը հալէ ու կը մաշէ զայն: Կը զրկէ նաեւ իր բարեկամները, որոնք Քրիստոսի աղքատներն են: [Ագահը], որ անիրաւ մամոնային միջոցով պէտք է բարեկամ վաստակի, սակայն անիրաւաբար կը պահէ զայն թէ՛ հարուստներէն եւ թէ՛ աղքատներէն ու չի՛ յանձներ, որպէսզի աճի ու շահի, այլ չարաչար կը պահէ, եւ ինքն ալ կը զրկուի, որովհետև իր հետ չի՛ կրնար տանիլ, այլ իր հարստութիւնը օտարներուն կը ձգէ:

Ագահին սիրտը փշալից է,
անփորձ արծաթ եւ կեղտով լեցուն:
Ինչքան շատ ինչքեր ունի,
այդքան դատարկ է ամէն բանէ:

ԽՆԴԻՐ Ժ
Մահացու վեցերորդ մեղքի մասին, որ որկրամոլութիւնն է

Որկրամոլութիւնը անասնաբար ուտելու փափաքն է: Եւ կամ այսպէս. որկրամոլութիւնը բնութեան մեզի սահմանած չափէն ու սահմանէն աւելի ուտելն է: Որկրամոլը բազմաթիւ կերպերով կը մեղանչէ: Նախ՝ երբ ժամանակէն առաջ կ'ուտէ, ինչպէս Ադամ արգիլուած գիտութեան ծառէն կերաւ եւ որկրամոլութեամբ մահը աշխարհ բերաւ:

Երկրորդ՝ երբ անոյշ եւ համեղ կերակուր կը խնդրէ, առանց նայելու բնութեան ու բնաւորութեան հարկաւորութեան. ասիկա եսաւին նման է, որ մէկ ոսպապուրի համար իր անդրանիկութիւնը ծախեց, որ կրնար հացով կշտանալ: Նաեւ նման է այն մեծահարուստին, որ խորտիկով եւ տեսակ-տեսակ կերակուրներով զեղխութեամբ կ'ապրէր ու կը փափկանար, յետոյ սակայն անքուն որդերու կերակուր եղաւ:

Երրորդ՝ երբ չափէն աւելի ուտէ, որ բնութեան հակառակ է, մինչ կարելի է քիչ կերակուրով կշտանալ: Ինչպէս Քրիստոս Մարթային ըսաւ, թէ՝ դուն բազմաթիւ կերակուրներու մասին կը խորհիս, բայց այստեղ քիչ կերակուր պէտք է:

Չորրորդ՝ երբ ախորժակով եւ ջերմ ցանկութեամբ ուտէ. ո՛չ թէ կերակուր ուտելը մեղադրելի է, այլ ցանկութեամբ ուտելը մոլեկան է:

Հինգերորդ՝ երբ շատ աշխատութեամբ կերակուր կը պատրաստէ, որպէսզի համով ըլլայ, սակայն անօթութիւնն է, որ կերակուրը պիտի քաղցրացնէ:

Վեցերորդ՝ որկրամոլութիւնը Աստուծոյ տաճարը սատանայի տունի կը վերածէ, որովհետև խոզը, որ շատակեր է, դևերը Քրիստոսէ խնդրեցին խոզերուն մէջ մտնել:

Եօթներորդ՝ մարդուն շնացող կ'ընէ, ինչպէս յայտնի է Ղովտէն, որ շատ գինի խմեց եւ իր աղջիկներուն հետ շնացաւ:

Ութերորդ՝ զԱստուած կը բարկացնէ, ինչպէս կ'ըսէ Դաւիթ մարգարէն, մինչդեռ կերակուրը անոնց բերանին մէջ էր, Աստուծոյ բարկութիւնը անոնց վրայ ելաւ:

Իններորդ՝ մարդասպան կը դարձնէ, ինչպէս Հերովդէսը իր ատեանին մէջ Յովհաննէս Մկրտիչին սպաննեց:

Տասներորդ՝ մարդուն Յուդա կ'ընէ, որ իր ձեռքը նախքան զՔրիստոս՝ ամանին երկարեց, եւ երբ պատառը առաւ, սատանան մտաւ իր հոգիին մէջ:

Տասնմէկերորդ՝ մարդուն կը մեռցնէ հոգիով ու մարմինով. Հոգիով, ինչպէս Աստուած Ադամին ըսաւ. այն օրը, երբ ուտէք, մահուամբ պիտի մեռնիք. իսկ մարմինով, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ, թէ՝ նուրբ եւ փափուկ մարդը կենդանի վիճակով մեռած մըն է:

Տասներկրորդ՝ որկրամոլութիւնը մարդս քարասիրտ կ'ընէ, ինչպէս Դաւիթի ժամանակ Նաբաղ անունով հաճոյասէր մարդ մը, որ հեշտութեան եւ հաճոյքի մէջ ընկղմած ըլլալով, սիրտը քարացաւ եւ երեք օր ետք չարաչար մեռաւ:

Տասներեքերորդ՝ որկրամոլութիւնը մարդուս կաթուածահար կ'ընէ, որովհետև Սուրբ Յովհաննէս Ոսկեբերանը կ'ըսէ, թէ բազմախորտիկ սեղանը հիւանդութեան մայրն է, քանի որ մարդուն մարմինը ինչքան շատ լեցուի, այդքան կը տկարանայ:

Տասնչորրորդ՝ որկրամոլութիւնը մարդուն կ'արգիլէ առաքինութեանէն, ինչպէս քերծէն [որսի շուն], երբ շատ կերած ըլլայ, չի՛ կրնար նապաստակը բռնել, իսկ շունը իր որսը չի՛ կրնար որսալ. այսպէս ալ շատակեր մարդը առաքինութիւն չի՛ կրնար ստանալ: Տակաւին, Դանիէլ մարգարէն, քսանմէկ օր ծոմ պահելով, Նաբուգոդոնոսորին երազը մեկնեց. իսկ երեք երիտասարդները, ընդեղէն եւ հունտեր ուտելով, գեղեցկացան. իսկ արջը, քառասուն օր ծոմ պահելով, լեղին կը թափէ: Այսպէս՝ սակաւակերութեամբ մարդը մեղքն ու սատանան իր հոգիէն կը վռնտէ, ինչպէս Քրիստոս ըսաւ. այս դեւը ուրիշ ձևով չ'ելլեր, եթէ ոչ պահքով ու աղօթքով:

Որկրամոլութիւնը Ադամին դրախտէն հանեց, ջրհեղեղ բերաւ, Նոյ Նահապետին մերկացուց, Ղովտին իր աղջիկներուն հետ շնութիւն ընել տուաւ, պատուիրաններուն տախտակները կտրել տուաւ Մովսէսին, իսրայէլացի ժողովուրդը Բելբեգովրի մէջ պղծեց, որովհետև կուռքերուն մատաղը կերաւ, յետոյ շնութեան մէջ ինկաւ:

Ի վերջոյ, որկրամոլութիւնը մարդուն կռապաշտ կը դարձնէ, ինչպէս կ'ըսէ Սուրբ Պօղոսը, բայց հիմա Քրիստոսի խաչի թշնամիներուն, որոնց աստուածը իրենց որովայնն է, լալով կ'ըսեմ...: Տակաւին, որկրամոլը աւելի վատ է, քան կռապաշտը, քանի որ կռապաշտները արեգակն ու լուսինը, արծաթն ու ոսկին կը պաշտէին, իսկ որկրամոլը իր որովայնին աղբը կը պաշտէ:

Շատակերին փորը անյագ դժոխք է.
ինչքան շատ լեցնես, հերիք է չըսեր:

Շարունակելի

«Քրիստոնէական Ուսանելի», 1806
Աշխարհաբարի վերածեց Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.07.2025 թ.
Տպաքանակը՝ 1265